ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 I +374 11 472 771 mailbox@ytpc.am

№ ՍԳ/381-2022

28 09 2022թ.

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Հ. Թագեսյանին

Հարգելի պարոն Թագեսյան

Համաձայն 08.06.2022թ. կնքված ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-22/32 պայմանագրին <<ԹԱԳ ՀԷՄ>> ՍՊԸ-ը 45 օրացուցային օրվա ընթացքում պետք է մատակարարեր 400 հատ F8 ֆիլտր՝ 19752000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի: Ընդ որում 22.07.2022 համաձայնագրով մատակարարման ժամկետը հետաձգվեց ևս 30 օրացուցային օրով: Արդյունքում ֆիլտրները մատակարարվեցին 08.09.2022թ.: Մասնագիտական զննման արդյունքում պարզվեց, որ տեխնիկական որոշ պարամետրերը չեն համապատասխանում պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին, ինչի հետևանքով պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա.Ստեփանյանը ներկայացրեց բացասական եզրակացություն:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 2.1.7 կետի: Մասնավորապես՝ գնորդը իրավունք ունի

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի Ձեր կազմակերպությունից կգանձվի պայմանագրի ապահովումը պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որակի ապահովումը պայմանագրի գնի 15 տոկոսի չափով և տուգանքը պայմանագրի 0,5 տոկոսի չափով:

Գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյան

28.09.2022թ.